



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«20» 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 006 - 25

Նախաձեռնող՝

«Նվեր Էդգարի Պեյրոսյան» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Արզական բնակավայր, Շինարարների փ. 3-րդ նրբ. փ. 5

Գործունեությունը՝

Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում ջարդիչ
տեսակավորող կայանի կառուցում

Կոտայքի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 006 - 25

«20» 01 2025թ.

Կոտայքի մարզի Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Նվեր Էդգարի Պետրոսյան» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Արզական բնակավայր

Ներածական մաս. Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանը գտնվում է Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի վարչական տարածքում:

Մոտակա բնակավայրերն են՝ Արզականը, Բջինն, Ալափարսը և Չարենցավան քաղաքը: Նախատեսվող ՋՏԿ-ի տեղադիրքից մոտ 250 մ հեռավորության վրա հոսում է Դալար գետի աջ վտակը: Հանքավայրի շրջանում են գտնվում Արզական-Մեղրաձորի և Բանքսի սոճու պետական արգելավայրերը: Հայցվող տարածքից մոտ 150 մ հեռավորության վրա են գտնվում անտառային հողերը, որտեղ գերակշռում են հաճարենիները, հացենի և այլն: Տարածքից շուրջ 800 մ հեռավորության վրա է գտնվում Արամ Մանուկյան մարզադաշտային դպրոցը, իսկ շուրջ 1 կմ հեռավորության վրա՝ Սվյազ հանգստի գոտին:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությանը ընկերությունը՝ նախատեսում է կառուցել քարի ջարդման-տեսակավորման կայան: Ջարդիչ կայանի հումքը հանդիսանալու է հանքավայրի հանքաքարը՝ մարմարը:

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով /լիցենզիայի կոորդինատներ/



1. 8462145.0	4486237.0
2. 8462147.2	4486270.6
3. 8462134.7	4486295.9
4. 8462072.9	4486253.2
5. 8462033.4	4486216.9
6. 8462058.4	4486199.3
7. 8462073.6	4486190.7
8. 8462095.0	4486183.0
9. 8462133.0	4486211.0

Ջարդիչ կայանի առավելագույն արտադրողականությունն ըստ հանքավայրի արտադրողականության կկազմի 1556 մ³: Հաշվի առնելով հանքաքարի տեսակարար զանգվածը՝ 2.7 տ/մ³, արտադրողականությունը, կկազմի 4201.2 տ/տարի:

Նախատեսվող գործունեության իրականացման համար ընկերությունն օգտագործելու է ՏՄԴ-109 մակնիշի ջարդիչ կայան: Այն նախատեսվում է տեղադրել հանքավայրի հարավային մասում: Ջարդիչ ՏՄԴ-109 մանրացնող կայանը համակողմանի (ունիվերսալ) մեխանիզմ է, որը կիրառվում է ցանկացած ամրության ապարներ մանրացնելու համար: Մանրացումը կատարվելու է երկու՝ այտավոր ջարդիչների միջոցով՝ խոշոր և միջին, եզակի դեպքերում առավել մանր մանրացման համար:

Մանրացված քարի արտադրությունը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում՝ ըստ տարբեր չափերի կատեգորիաների:

Արտադրության փուլեր լինելու են.

1-ին փուլ. հումքը տեղափոխվում է հատուկ այդ նպատակով նախատեսված բունկեր, որը կարգավորելու է առաջնային ջարդիչի մատակարարման աշխատանքը:

2-րդ փուլ. առաջնային ջարդիչից հետո ստացված հումքը տեղափոխվելու է երկրորդային ջարդիչ՝ ավելի մանր ֆրակցիա ստանալու համար:

Քարի հումքը՝ մարմարը տեղափոխվում է խոշոր ջարդման ընդունիչ բունկեր: Բունկերից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման:

Արտադրամասում նախատեսվող բոլոր սարքավորումները շարժական են և տեղադրվելու են բացօթյա:

Շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Չարենցավան համայնքից:

Ջուրը բերվելու է KO-002 ջրցան-վացող ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ՍՄԻ-ԲԼԿ-1.4 ջրի ցիստեռնով:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ փոշենստեցման, թափոնների տեղափոխման, կենսբազմազանության պահպանության համար:



Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մշտադիտարկումներ: Դրանց իրականացման համար նախատեսվում են ծախսեր:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«Նվեր Էդգարի Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է օրենսդրությանը համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ստացված առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել:

Փորձաքննական գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները և հաշվետվությունում առկա անճշտությունները և բացթողումները, մասնավորապես՝

- Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքը գտնվում է «Արգաքան-Մեղրաձոր» արգելավայրի անմիջական հարևանությամբ, հետևաբար հաշվի առնելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածներով սահմանված պահպանության ռեժիմի պահանջները պետք է նշել, որ ՋՏԿ-ի աշխատանքի դեպքում հնարավոր վնասակար ազդեցությունները կարող են ազդել շրջակա միջավայրի և արգելավայրի ռեժիմի վրա,

- ՇՄԱԳ հաշվետվության 4.6 և 4.8 ենթակետերում կենդանական աշխարհի և բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ոչ ամբողջական,

- ջարդիչ տեսակավորող կայանքի համար հայցվող տարածքը գտնվում է Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում, սակայն տարածքի չափի և տեղադիրքի վերաբերյալ հստակ տեղեկատվություն առկա չէ,

- հաշվետվության «Ջրային ռեսուրսներ» բաժնում նշված է, որ «Հանքավայրի տարածքում բացակայում են աղբյուրները և գետաջրերը: Մակերևութային ջրերը կապված են ժամանակավոր մթնոլորտային տեղումների հետ: Սակայն ՇՄԱԳ-ի նկար 1-ում երևում է, որ հանքավայրի տարածքի անմիջական հարևանությամբ անցնում է Դալար գետի վտակը: Դա նաև նշվում է էջ 30-ում՝ «Նախագծվող ՋՏԿ-ի տեղադիրքից մոտ 250 մ հեռավորության վրա հոսում է Դալար գետի աջ վտակը»: Նույնիսկ եթե այն ունի սեզոնային ժամանակավոր հոսք, պետք է ՇՄԱԳ-ում դիտարկվի այդ ջրային ռեսուրսը և հունի սելավավտանգավորությունը:

- հղումով կամ քարտեզագրական նյութերով չի հիմնավորվել էջ 65-ում ներկայացված պնդումն առ այն, որ գործունեության համար ենթակա տարածքում ստորերկրյա ջրերը բացակայում են,

- ՇՄԱԳ հաշվետվությունում «Ռելիեֆ և երկրաձևաբանություն» բաժնում ռելիեֆի և երկրաձևաբանության մասին որևէ տեղեկություն չի նշվում,



ՇՄԱԳ-ում բացակայում է նաև տարածքի երկրաբանական կառուցվածքին վերաբերող որևէ տեղեկատվություն:

- ՀՀ ԳԱԱ Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի կողմից ստացված մասնագիտական կարծիքի համաձայն՝ Աղվերանի մարմարի հանքավայրի շրջանին բնորոշ անտառներում չի կարող աճել հաճարենու *Fagus orientalis* տեսակը, կաղնու *Quercus boissieri*, *Q. Araxina*, *Q. Iberica* տեսակները, կարմիրգրքային գիհու *Juniperus Sabina* տեսակը և այլն, ինչը նշվել է հաշվետվությունում,

- Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքից մոտ 150 մ հեռավորության վրա են գտնվում անտառներ, բազմաթիվ հանգստի գոտիներ, հետևաբար գործունեության իրականացման արդյունքում առաջացող փոշին բացասական ազդեցություն կունենա հարակից ծառաթփային բուսականության կենսունակության, ինչպես նաև հանգստի գոտիների վրա:

- համաձայն հաշվետվության՝ հայցվող տարածքի սահմաններում տեկտոնական խախտումներ, սողանքային երևույթներ, փլուզումներ, քարանձավներ հայտնաբերված չեն, սակայն արտակարգ իրավիճակների նախարարի 2021 թվականի մարտի 31-ի N^o 372-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգի քարտեզի՝ նշված տարածքից 4 կմ հեռավորության վրա է գտնվում Գաննու ակտիվ խզվածքի սեզմենտներից մեկը: Հաշվետվությունում ներկայացված մասշտաբով հնարավոր չի եղել հիմնավոր համարել սողանքների բացակայության մասին պնդումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ հիմք ընդունելով վերոնշյալ փորձաքննական հիմնավորումները, «Նվեր Էդգարի Պետրոսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Աղվերանի մարմարի հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան